

**Բանալի բառեր.**- լատինաամերիկյան գրականություն, էկզիստենցիալիզմ, մենություն, ձախողում:

Резюме

Марине Киракосян

**ОСОБЕННОСТИ ЛАТИНОАМЕРИКАНСКОГО ЭКЗИСТЕНЦИАЛИЗМА**

Латиноамериканский экзистенциализм сформировался под влиянием испанского экзистенциализма, который предшествовал немецкому и французскому и начал развиваться параллельно европейскому, почти одновременно. Но в отличие от французского, латиноамериканский является исключительно литературным феноменом и у него нет философско - теоретической основы.

Ярыми представителями латиноамериканского экзистенциализма являются Эдуардо Малеа, Роберто Арлт, Эрнесто Сабато, Хосе Доносо и Хуан Карлос Онетти.

Summary

Marine Kirakosyan

**PECULIARITIES OF LATIN AMERICAN EXISTENTIALISM**

The Latin American existentialism has evolved in parallel with the European existentialism under the influence of the Spanish existencial movement which in fact preceded both French and German existentialism. Just like in France it is solely a literature phenomenon without any philosophical theory in its basis. The most renowned authors of Latin American existentialism are Eduardo Malea, Roberto Arlt, Ernesto Sabato, Jose Donoso, Juan Carlos Onetti.

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ՝ ՄՈՏԻՎԸ՝ ԸՍՏ ԼԱՈ ՄԱՅԻ «ՄԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐԻ**

Սույն հոդվածը գրելիս սահմանափակվել ենք *միայն* Լատ Մայի պատմվածքներում կոռուպցիային վերաբերող մոտիվների քննությամբ: Այն խիստ կարևոր ենք համարել՝ մի քանի առանձնահատկություններից ելնելով:

Ա.կոռուպցիայի, կաշառակերության ի հայտ գալը գեղարվեստական գրականության մեջ ինքնին խոսում է այն մասին, որ հասարակական կյանքում պրոբլեմը դառնում է շոշափելի, հրատապ, որի հետևանքով էլ «սպրդում» է գրականություն: Երբ գրողը անդրադառնում է կաշառակերությանը, ըստ էության, խախտում է տաբուն, և նրա ստեղծագործությունները ստանում են քաղաքական շեշտադրում, իսկ բուն գրողը ակամայից դառնում է մտավորական-տեր<sup>2</sup>, քաղաքացիական հասարակության ու խոսույթի կերտման աջակից:

Բ.Որքան մեզ հայտնի է, կոռուպցիայի մոտիվը առանձին քննության առարկա չի դարձել հայալեզու գրականագիտական, պատմագիտական ուսումնասիրություններում: Կաշառակերության, կոռուպցիայի, գողության, «ագցելու» մոտիվները<sup>3</sup> դեռևս սպասում են իրենց ու-

1 Այս հասկացությունը օգտագործում ենք որպես սեռանիշ, որպեսզի խուսափենք այս համընդհանուր երևույթին տրվող այլ բառերի՝ տեսականիշների (օր.՝ կաշառք, դարձագումար, «պատիվ տալ» (почесть), բյուջեի թալան (=казнокрадство) և այլն) մանրամասն քննությունից: Ստորև շարադրվող քննության փորձում հստակ տարանջատում չենք մտցրել կաշառքների տեսակների վերաբերյալ՝ ուղիղ ու անուղղակի, նյութական և աննյութական և այլն:

2 Ինտելեկտուալ-տեր մտավորականի մոդելի մասին տե՛ս Տիգրան Սիմյան, 1918-1939 թթ. գերմանական վեպի գաղափարագեղարվեստական պրոբլեմատիկան, Երևան, 2015, էջ 15, 47-48, 49-50, 113, 115, 427:

3 Մի ձգգրտում անենք: Եթե թեման չի ենթադրում գործողություն, ապա նախընտրելի է օգտագործել «թեմա» բառը, իսկ եթե թեման, որն անգամ արտահայտվում է գոյականով, բայց թաքնված կերպով ենթադրում է գործողություն, գործընթաց, ապա գոյականի հետ «մոտիվ» բառը օգտագործելը սխալ չէ: Օրինակ՝ գողության, կաշառակերության, դարձագումարի, կոռուպցիայի մոտիվները, բայց ոչ՝ բնության, արևի ու լուսնի մոտիվները:

սումնասիրողին<sup>4</sup>: Եթե քննությունը կատարվում է դասական գրականության հիման վրա ու տարածամանակյա կտրվածքում, ապա գրականագետի հետազոտությունը առնչություն կունենա սոցիոլոգիայի, մարդաբանության, ազգային մտածողության (մենթալիտետ) հետ, իսկ համաժամանակյա կտրվածքում նախևառաջ ստանում է *քաղաքական* հնչերանգ, ուստի գրականագետը նման երևույթի անդրադառնալիս ցանկալի է՝ պատասխանի այն հարցին, թե արդյոք ինքը պատրաստ է խախտել տաբուն, խոսել գրական մոտիվ-իրականություն կապի մասին, թե ոչ: Այս ամենը իր հերթին բերում է իր դժվարությունները (փաստ vs երևակայություն, գրական տեքստ vs սոցիալական ինստիտուտներ և այլն):

Ավանդական գրականագիտության հարացույցի կրողը կարող է առարկել մեզ՝ փաստարկելով, որ կոռուպցիայի, կաշառակերության, գողության, թալանի մոտիվները ինչ կապ ունեն գրականագիտության հետ: Սրանք քաղաքագետների, տնտեսագետների, իրավապահների, հասարակաբանների, իրավաբանների ուսումնասիրության գործն են: Այսպիսի տրամաբանությամբ գործառնող գրականագետի համար փակված կմնա գրական տեքստերում դրսևորված ազգային մտածողության առնվազն մեկ շերտ: Հակառակ դեպքում, երբ գրականագետը զանց է առնում նկարագրել նշյալ մոտիվները տարածամանակյա և համաժամանակյա կտրվածքներում դասական գրականության ու ժամանակակից երկերի հիման վրա, ապա նա խախտում է ավանդական գրականագիտության սահմանները, իր հարցադրումով հայտնվում միջգիտակարգային սահմանագծին և վերջապես կերտում քաղաքացիական հասարակության ձևավորմանը նպաստող խոսույթ: Այլ խոսքով՝ ազգային մտածողությունից գալիս ենք դեպի (անուղղակի կերպով) «քաղաքականացված» գրականագիտության, որը պետք է լինի անկախ՝ ցանկացած քաղաքական կուսակցություններից, նրանց պատվերից և այլն: Հավանաբար գրականագիտության

4 Օրինակ, այս թեման սպասում է նաև իր լեզվաբան հայ ուսումնասիրողին, որը տարածամանակյա կտրվածում կնկարագրի «կաշառակերություն» հասկացույթը (концепт), իր լեզվական աստղծով (հոմանիշները, դարձվածքներ և այլն): Մասամբ այս խնդիրը նկարագրված է ռուսերենի հիման վրա (А. А. Витковский, Ф.П. Ходеев, О соотношении "взятка" и "коррупция" // <http://legalconcept.org/wp-content/uploads/2013/11/11-11-%D0%92%D0%B8%D1%82%D0%B2%D0%B8%D1%86%D0%BA%D0%B8%D0%B9%D0%A5%D0%BE%D0%B4%D0%B5%D0%B5%D0%B2.pdf> – 20.11.2016.; И. Тимошенко, Ф. Ходеев. "Взятка" в праве и русском языке // Российская юстиция, 2003, N 10, с. 56-57):

ավանդական սահմաններն ու «քաղաքականացված» տեքստեր հեղինակելու մտավախությունն են ետ պահում գրականագետին նման մոտիվների քննությունից:

Հետաքրքրականն այն է, որ կաշառակերության, կոռուպցիայի թեմաներին նվիրված աշխատանքները սակավաթիվ են նաև Ռուսաստանում և քննում են այլ գիտության ներկայացուցիչների կողմից: Օրինակ՝ իրավաբան Լարիսա Լիտվակը կաշառքի թեման ներկայացնում է բանահյուսության, միջնադարյան ու դասական ռուս գրականության հիման վրա<sup>5</sup>, գրեթե նույն նյութը՝ մանկավարժական գիտությունների դոկտոր Վալերի Լոխտլետովը և տնտեսագետ Կրիստինա Ջելենչեկովան<sup>6</sup>: Բերված օրինակները վկայում են, որ Ռուսաստանում նույնպես այս մոտիվը պատշաճ ուշադրության չի արժանացել գրականագետների կողմից:

Գ. կոռուպցիայի, կաշառակերության մոտիվների քննությունը մեր ուշադրության կենտրոնում հայտնվեց այն ժամանակ, երբ հայերեն թարգմանվեց Լաո Մայի «Մի յուրօրինակ անձնավորություն» պատմվածաշարը, որն էլ մեզ մոտիվացրեց խախտել տաբուն...

Չին գրող Լաո Ման (գրական կեղծանունը՝ MaJunjie)՝ ժամանակակից Չինաստանի փոքր արձակի վարպետներից է, որը համարվում է Չինաստանի գերկարձ (300-1000 բառանոց) պատմվածքների՝ «flash-fiction» կոչված ժանրի հիմնադիրներից մեկը: Ժանրի անվանումը մատնանշում է 300-1000 բառ ունեցող պատմվածքները: «Flash-fiction» ժանրանիշ անվանումը պայմանական բնույթ ունի, քանի որ կառուցվածքային տեսանկյունից գործ ունենք պատմվածքի հետ: Պարզապես «flash-fiction» ժանրանիշ անվանումը պատմվածքի փոքր, սրընթաց, մեկ շնչով ընթերցելու(in-one-sitting) գաղափարն է ընդգծում<sup>7</sup>:

5 Литвак Л.Г., Взятка в художественной литературе // Вестник Краснодарского Университета МВД России, 2013, N 1 (19), с. 96-100 / file:///C:/Users/Tigran/Downloads/vzятka-v-hudozhestvennoy-literature.pdf -20.11.2016?

6 Лихолетов В.В., Зеленченкова К., Отражение проблем борьбы с коррупцией в творчестве русских поэтов и писателей // Управление инвестициями и инновациями". 2016. № 1. / <http://elibrary.ru/item.asp?id=25767173> -20.10.2016.

7 Լաո Մայի, պատմվածքների թեմատիկ առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Տիգրան Սիմյան, Նախաբան կամ Լաո Մայի պատմվածքների թեմատիկան // **Լաո Մա**, Մի յուրահատուկ անձնավորություն: Համառոտ պատմվածքներ, Երևան, 2015, էջ 5-22:

Լիշերի նման քանակային սահմանափակությունը մեծ բարդություն է առաջացնում: Գրողը նվազագույն բառերով պիտի կերտի առավելագույն խտության տեքստ: Բառերի քանակային սահմանափակությունը հեղինակին դնում է այնպիսի «տագնապային» իրավիճակի մեջ, որ նա ստիպված է իր ասելիքը ներկայացնել առանց ավելցուկային տեղեկատվության, առանց «աղմուկի» (նշանագիտական իմաստով):

Լատ Ման Պեկինի ժողովրդական համալսարանի պրոֆեսոր է: Հենց այս սոցիալական, գիտական կարգավիճակը նրան պարարտ հող է տալիս սեփական գրական նյութը գտնելու համար: Նա, կարելի է ասել, իր ժամանակի սայմոգրաֆներից է: Երա պատմվածքների թեմատիկ համայնապատկերի մեջ են ուղղահայաց կառավարման մոդելը, սոցիալական ստրկությունը, կոռուպցիան: Սակայն հատկանշականն այն է, որ նրա պատմվածքներում շոշափվող խնդիրները պատմում են ոչ միայն չին հասարակության, գիտական ու համալսարանական միջավայրի, պետական համակարգի, կոլեկտիվ մտածողության (մենթալիթետ) մասին, այլև դուրս են գալիս նեղ ազգային սահմաններից:

Շոշափվող խնդիրները ՄԱՐԴԿԱՅԻՆ են՝ հեղինակային խոր դիտարկման շնորհիվ գեղարվեստական մշակում ստացած խտացված երևույթներ, որոնք պատմվում են հիմնականում Ich-Erzählung-ի (ես-պատում) տեսանկյունից: Պատումի նման կազմակերպումը գեղարվեստական հյուսվածքում ուժեղացնում է «փաստը», պատումի «վավերականությունը», արժանահավատությունը: Իսկ պատմվող իրականությունը ներկայացվում է «թեքված»՝ հումորային և արքայական մոդուսի մեջ («Հազը», «Փլուզումը», «Մի պոետ», «Փիլիսոփայություն»):

Լատ Ման, լինելով համալսարանական, երևան է հանում բուհական միջավայրում ապաշնորհ մենեջմենթի, փողերի ոչ արդյունավետ ծախսելու երևույթը, որը, ինչպես միշտ, ներկայացվում է հումորով («Մահվան ծանուցման բլանկներ»): Գիտական միջավայրի լծացածության ու հանրային փողի ոչ ձիշտ օգտագործման ու բաշխման երևույթները կարելի է տեսնել Լատ Մայի «Հարց», «Փիլիսոփայություն» պատմվածքներում:

Օրինակ՝ «Հարց» պատմվածքում քսան տարի առաջ ավարտած շրջանավարտը վերադառնում է ավա մատեր և նկատում, որ համալսարանում գրեթե ոչինչ չի փոխվել. «...բոլոր շինությունները նախկինի

պես քայքայված էին և բացահայտում էին ներդրման բացակայությունը»: Հատկապես ուշագրավ է պատումը վարողի դիպուկ համեմատությունը. «Ընդհանրապես համալսարանը պետք է պահպանվի այնպիսին, ինչպիսին եղել է՝ ի տարբերություն այն դեռահաս աղջիկների, որոնք սիրում են պճնվել»<sup>8</sup>: Այս դիտարկումները անուղղակի քննադատություն են՝ ուղղված քաղաքական դաշտին, քանի որ վերջինս պատշաճ ուշադրություն, ֆինանսական օժանդակություն չի ցուցաբերում կրթական համակարգին:

Գիտության ոլորտի, համալսարանների կախվածությունը քաղաքականից տեսանելի է «Համալսարանական դիմում», «Նախնական քննություն» պատմվածքներում:

«Համալսարանական դիմում» պատմվածքում նկարագրվում է, որ քաղաքական բարձրաստիճան պաշտոնյա ինչ-որ (պետ) որդու համար ծրարով բացահայտ «այլընտրանք», այսինքն՝ կաշառք է առաջարկում ընդունող հանձնաժողովի նախագահին՝ ցածր նիշեր հավաքած որդուն համալսարան տեղավորելու համար: Հանձնաժողովի ազնիվ նախագահը հրաժարվում է գործարքից և առաջարկում պետին «կրակել, սպանել կամ պաշտոնից հեռացնել» իրեն (էջ 52): Պետը պատասխանում է. «Ես համարձակություն չունեմ կրակելու Ձեզ վրա, բայց պաշտոնանկ անելն անհնարին չի լինի» (էջ 52): Հենց այդպես էլ լինում է. «Հետո ծիտիկն ինձ ասաց, - նկատում է պատմվածքի վերջում պատումը վարողը, - որ պետի տղան ի վերջո ընդունվել էր մեկ ուրիշ համալսարան: Տարի ու կես հետո տնօրենը փոխեց պաշտոնը: Ոչ ոք չգիտեր, թե արդյոք դա որևէ կապ ունե՞ր պետի հետ» (էջ 53): Մեջբերվածը վկայում է, որ անհատը դառնում է համակարգի, իշխանական ուղղահայացի զոհը, համակարգի «ավելորդ» մասը: Պետական շահը զոհաբերվում է քաղաքական պաշտոնյաների շահերին:

Իշխանական «վերև»-ի կամքը լավագույնս երևում է «Նախնական քննություն» պատմվածքում, որտեղ ռեկտորը, դիմելով ամեն տեսակի զեղծարարության, նշանակել է տալիս ֆինանսների վարչության տնօրենի անգլերենի մինիմումի գնահատականը, որ բարձրաստիճան պաշտոնյան կարողանա ստանալ գիտությունների թեկնածուի իր երազած աստիճանը: Վարչության տնօրենն իր «շնորհակալությունն» է հայտնում՝ բաց թողնելով գումար՝ «ուսումնական հաստա-

8 Լատ Մա, Մի յուրահատուկ անձնավորություն: Համառոտ պատմվածքներ, Երևան, 2015, էջ 73: Այսուհետ բոլոր մեջբերումները կատարվելու են այս գրքից՝ փակագծերում նշելով միայն էջերը:

տությունների ընդլայնման նախագիծը» իրականացնելու համար, «որն այդքան երկար ժամանակ հալածում էր ռեկտոր Ֆանին...» (էջ 45): Ուրիշ խոսքով՝ ֆինանսների վարչության տնօրենը պաշտոնի դիրքի չարաշահումով ու պետական միջոցներով գնում է իր գիտությունների թեկնածուի աստիճանը: Համալսարանի ռեկտորն էլ իր հերթին մի լավ մաշկում է «ոսկե ձվեր ածող սագին» (էջ 42)՝ վարչության պետին:

Երբ ցանկացած պետության մեջ քաղաքական դաշտը, քաղաքական վերնախավը՝ էլիտան, բռնատիրում է հասարակական մյուս ոլորտները (տեղեկատվական, տնտեսական, գիտական և այլն), ապա այդ դաշտերում գտնվողները՝ գրողները՝ «դերասանները»՝ ըստ Պ. Բուրդյուի<sup>9</sup>, կախման մեջ են հայտնվում քաղաքականից, և ի հայտ է գալիս «սոցիալական ստրկությունը», երբ անհատը՝ «ներքև»-ում գտնվողը, միջոցներ է փնտրում (պնակալեզություն, ստորաքարշություն, քստմենտիություն և այլն)՝ իր սոցիալական դիրքը փոխելու համար:

Ուղղահայաց կառավարման մոդելը, սոցիալ-հասարակական «վերելակների» բացակայությունը, սոցիալական «ստրկությունը», կոռուպցիան և կաշառակերությունը սովորաբար կազմում են «կենդանի» օրգանիզմի ամբողջական շրջապտույտ: Ուղղահայաց կառավարման և կաշառակերության փայլուն օրինակներ կարելի է տեսնել Լաո Մայի «Ընդհատված հեռախոսագանգ», «Ծնչառական սուր վարակիչ հիվանդության ախտանիշները», «Երդման արարողությունը», «Ինչ-որ առումով», «Մի թեթև ձեռքով» պատմվածքներում:

Օրինակ՝ «Ընդհատված հեռախոսագանգ» պատմվածքում վերընտրության պատրաստվող տնօրենը հեռախոսով իր ենթակայի գովքն է անում, քանի որ ակնկալում էր ընտրության օրը մի փառաբանական ելույթ նրա բարության, մասնագիտական նվիրվածության, սեփական անձի նկատմամբ խստապահանջության, ժուժկալության և

9 Այս մասին մանրամասն տե՛ս Социологический анализ Пьера Бурдьё. Альманах Российско-французского центра социологии и философии Института социологии Российской Академии наук, М.: Институт экспериментальной социологии; СПб.: Алетейя, 2001 / [http://yanko.lib.ru/books/cultur/almanah-soc\\_anal\\_burdye-81.pdf](http://yanko.lib.ru/books/cultur/almanah-soc_anal_burdye-81.pdf) - 20.10.2016, Пьер Бурдьё, Полелитературы, с. 22-87 // Новое литературное обозрение, № 45, 2000 / <http://bourdieu.name/content/burde-pole-literatury> - 20.11.2016 տեսության համառոտ շարադրանքը հայերենով տե՛ս Տիգրան Սիմյան, Գրականագիտության «գործարանը». մեթոդ, տեքստ, ընթերցող, մեկնաբանող, Երևան, Հեղ. Հրատ., 2015, էջ 131-134.

կատարած բարեփոխումների մասին: Երբ հեռախոսագանգի ընթացքում խոսք է լինում բնակարանային բարեփոխումների մասին, ապա ենթական, մոռանալով ամեն ինչ, զայրացած նկատում է. «-Բոլորը բողբում են, որ Դուք և մի քանի փոխտնօրեններ չափից ավելի շատ բնակարանային տարածք ունեք... <...> Դա վատ է և վնասում է Ձեր հեղինակությանը մարդկանց շրջանում» (էջ 129,130): Այս խոսքերից հետո հեռախոսակապը խաթարվում է, առաջանում է աղմուկ. «- Ի՞նչ պատահեց Ձեր հեռախոսին: Ալլո՛, ալլո՛, ալլո՛: Ինչու՞ է ձայնը կտրատվում: Խզխզոցն այնքան շատ է, որ չեմ կարողանում Ձեզ լսել: Ալլո՛, ալլո՛...», - գոռաց տնօրենն ու անջատեց հեռախոսը» (էջ 130):

«Ծնչառական սուր վարակիչ հիվանդության ախտանիշներ» պատմվածքը ներկայացնում է, թե ինչպես է տղամարդը ժամանակից շուտ ինքնաթիռով վերադառնում հայրենիք, քանի որ կինը մի քանի օր հեռախոսագանգերին չէր պատասխանում: Քաղաքում սուր վարակիչ հիվանդությունների պատճառով հայտարարվել էր կարանտին: Սպիտակ զգեստով «ոստիկանները» հարցուփորձ են անում, թե ում հետ է շփվել վերջերս: Սրսկումից վախեցած տղամարդը պատմում է «կաշառակերության մեջ իր ներգրավվածության մասին և իր հետ մտերմագույն կապերի մեջ եղող մարդկանց անունները» (էջ 142): Այս ամենը խոստովանում է իր մտքում հիշելով «կինոնկարներում տեսած տեսարանները, երբ տանջանքների միջոցով խոստովանություն էին կորզում» (էջ 142):

Այսպիսի համատեքստում պատմվածքի վերնագիրը՝ «Ծնչառական սուր վարակիչ հիվանդության ախտանիշներ», սկսում է գործառնել նաև հարափմաստային (կոնոտատիվ) մակարդակում, այն է՝ «սուր վարակիչ հիվանդություն»=կոռուպցիա: Ասվածը կարելի է հիմնավորել նաև պատմվածքի վերջին նախադասությամբ. «Հիվանդանոցում տասնհինգ օր կարանտինի մեջ մնալուց հետո նրան արդարադատության դատարան տարան» (էջ 142): Պատմվածքում նկարագրված «խեղձ» տղամարդը ֆիզիոլոգիական կարանտինից հետո ստիպված է լինում վախի պատճառով անցնել նաև բարոյական կարանտին:

Ուշարժան ենք համարում «Երդման արարողությունը» պատմվածքը, որտեղ նկարագրվում է, թե ինչպես պետք է բնակարաններ կառուցեն աղետի գոտում տուժածների համար, «որպեսզի մարդիկ կարողանան ձմռանն իրենց ապահով զգալ» (էջ 117): Որպեսզի կանխեն «կաղրային կաշառակերության, շինարարական տարբեր նախագծե-

րի ժամանակ սեփական շահին հետամուտ պաշտոնյաների հանցավոր չարաշահումների հանդեպ ժողովրդի մտավախությունները, <...>կոմսության հաշտարար դատավորը նորից ու նորից անդրադարձավ այդ ամենին՝ նախազգուշացնելով ծրագրում ներգրավված անձանց» (էջ 117-118): Այս մարդիկ սկսում են երդվել: «Նրանցից մեկը, – գրում է հեղինակը, – ցանկություն հայտնեց ավտովթարի ենթարկվել, մյուսը՝ կայծակնահար լինել, երրորդը՝ կեղտաջրում խեղդվել, մեկ ուրիշը՝ շատ խմելուց մեռնել, մինչդեռ մեկ ուրիշը ցանկացավ, որ վայրի գազանը խժոխ իրեն, մեկ ուրիշն էլ՝ իրեն կախվելու միջոցով ինքնասպան եղածի ուրվականը խեղդի, որին հետևեց մեկ ուրիշի ցանկությունը՝ սեփական կնոջ ձեռքով մկնդեղով թունավորվել...» (էջ 188):

Մահանալու ցանկության դաժան նկարագրությունները հնչում են արժանահավատորեն: Դաժան մահ ընտրելու ցանկությունը կարծես թե խոսում է նրանց անկեղծության, ընդհանուր գործին, բարձր արժեքներին նվիրված լինելու մասին: Այս անկեղծ երդումների իսկությունը բացահայտվում է պատմվածքի վերջին հատվածում. «Աղետյալների ողջույնների և լուսանկարչական խցիկների առկայծումների ու չրիկոցների ներքո հաշտարար դատավորը բարձրացրեց ոսկե մկրատը... Շենքը հանկարծ աղմուկով փլուզվեց, և վայրկյանների ընթացքում ամեն ինչ փշուր-փշուր եղավ: <ետագայում այն համարվեց արդյունաբերական վթար՝ հիմնված շինարարական սխալ աշխատանքների վրա: Պաշտոնյաների երդում տված հանցավոր խմբից ոչ մեկը կենդանի չմնաց այս երկրորդ աղետից հետո» (էջ 119):

Այս հատվածից հստակ երևում է պատումը վարողի դիրքորոշումը: Եթե անկեղծ երդում տված կոռումպացվածները կարողանում են զերծ մնալ առաջին աղետից, ապա երկրորդի դեպքում՝ ոչ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ գողությունը, (համակարգային) կաշառակերությունը հասարակական չարիք են դառնում: Այն վերագրային երևույթ է՝ քաղաքական սահմաններ չձանաչող: Այն գոյություն է ունենալու, քանի դեռ մարդը առաջնորդվում է կենսաբանական օրենքներով. ուղեղը սիրում է ուտել-խմել, բազմանալ (սեքս) և իշխել: Պատահական չէ, որ այդ «արքետիպային» երևույթը կարելի է տեսնել ամենուր: Օրինակ՝ Լեհաստանում Ռադոմ քաղաքի Ֆրանց ժիրոմսկու կենտրոնական պողոտայի շենքերի վրա գրված է՝ VODKA, SEX, POLYTIKA: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ կենսաբանական օրենքի «մանիֆեստը»: Կենսաբանական օրենքներով առաջնորդվող մարդու հա-

մար քաղաքականությունը պետք է *իշխելու, գումար վաստակելու, ուտել-խմելու և իզական սեռի լավագույն տեսակը վայելելու համար:*

Այս թեմայի լավատեսական նրբերանգային նշարունակություններից է «ինչ-որ առումով» պատմվածքը, որտեղ պատումը վարողի խորամանկ վերադասը «ցանկացած խնդրի վերաբերյալ իր կատարած դիտողությանը ավելացնում է՝ «ինչ-որ առումով»»: Երբ նա որևէ մակագրություն է դնում կամ ելույթ ունենում, միշտ սկսում է «ինչ-որ առումով» արտահայտությամբ. «...Նա ասում է, որ ինչ-որ առումով ջատագովները կարող են կարևոր պաշտոններ ստանալ: Նա ասում է, որ ինչ-որ առումով որևէ մեկը կարող է որևէ խնդրի վերաբերյալ իր վերջնական ասելիքն ունենալ: Նա ասում է, որ ինչ-որ առումով որոշ սխալ որոշումներն անխուսափելի են: Նա ասում է, որ ինչ-որ առումով որոշ ապօրինի գործողություններ կարող են հասկանալի լինել: Իմ վերադասը կարծում է, որ ինչ-որ առումով պետական դրամների կորուստն անխուսափելի է: Նմանապես, ինչ-որ առումով, կաշառակերությունը բնական է, պետական պաշտոնների առուծախը կարող է դրական դեր կատարել, և անառակությունն ու խաղամոլությունն անհրաժեշտ են» (էջ 121):

Այս պատմվածքի գլխավոր «հերոսը» «ինչ-որ առումով» նշանակիչն է, որի իմաստի բացատրությունը (նշանակյալը) ուզում է իմանալ բյուրոյի աշխատակիցներից մեկը, թե ի վերջո ինչ է նշանակում «ինչ-որ առումով» արտահայտությունը. «Նա ձեռքով հարվածեց գրասեղանին ու ինձ վրա գոռաց. «ինչ-որ առումով, «առումն» ամեն ինչ է նշանակում» (էջ 121): Սակայն կարևորն է այն, որ այս պատմվածքը ավարտվում է «լավատեսորեն», քանի որ պատումը վարողի «վերադասը ստիպված էր իր խնդիրների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել որոշակի ժամին, որոշակի վայրում: Շատերը մեր բյուրոյում կարծում են, որ ինչ-որ առումով այս հանկարծահաս փոփոխությունը պետք է վաղ թե ուշ տեղի ունենար» (էջ 121): Կարծում ենք, որ «ինչ-որ առումով» ժամանակն է այս պատմվածքի հերոսի պես կոռումպացված քաղաքական վերնախավի անդամները սթափվեն:

Այժմ երկու պատմվածքի օրինակով տեսնենք, թե ինչպես է հարստացած քաղաքական պաշտոնյան իրեն դրսևորում միջանձնային հարաբերություններում:

Դատարկագույն, մեծամիտ «ամպագոռոգո բառեր» հնչեցնող լուրջ դեմքով պաշտոնյային կարելի է տեսնել «Ճառասացը» պատմվածքում: Այստեղ բարձրաստիճան պաշտոնյաներին Լաո Ման բնու-

թագրում է ոչ խոսքային հաղորդակցման դետալների միջոցով: Նման մանրամասները հնարավորություն են տալիս բացահայտելու կուսակցականների, քաղաքական դաշտի «դերասանների» հոգեբանությունը:

«Պատահական հանդիպում» պատմվածքում ներկայացվում է, թե ինչպես են կուսակցական դպրոցում հանդիպում վաղեմի ծանոթները: Ընկեր Չանգբ ինգը մեղմ է սեղմում հիշողության մեջ դեռևս չթարմացած վաղեմի ծանոթի ձեռքը. «Նրա ձեռքը փափուկ էր, և սեղմումն էլ առաջվա նման ամուր չէր» (էջ 135): Նման ժեստի՝ «մեղմ ձեռքի սեղմումից» Վու Չանգբ ինգի ընկերը հասկանում է, որ նա «բարձաստիճան պաշտոնյա» է: Անգամ գրույցի ընթացքում պարոն Վույի գրուցակիցը կարծում էր, որ կթփթփացնի նրա ուսը (էջ 137): Նկատենք, որուսին դիպչելը դոմինանտությունը ընդգծելու ցուցիչ-նշաններից է և նման բան կարող է թույլ տալ բարձր պաշտոն զբաղեցնողը, «վերև»-ը «ներքևիսին», հակառակը՝ քիչ հավանական է:

Այն Պիզը «Մարմնի շարժումների լեզուն. ընդլայնված տարբերակ» աշխատության մեջ ձեռքի այս սեղմումը անվանում է «հոլանդական սեղմում», որը Հոլանդիայում անվանում են «կեղտոտ սրբիչ»<sup>10</sup>: Ձեռքսեղմման նման ձևը մեր համատեքստում վկայում է, որ անհատը մոտիվացված չէ հաղորդակցման համար. «սառը» սկզբը հոգեբանորեն նրան «տեր» է դարձնում նման իրավիճակներում: Այս «տեր» լինելու և մոտիվացված չլինելու, իրեն համատեքստից դուրս մղելու «մեթոդը» շատ հաճախ կարելի է տեսնել այն ժամանակ, երբ որևէ մահկանացու սոցիալական «ներքև»-ից հայտնվում է բարձրաստիճան պաշտոնյայի հետ նույն հանրային տարածքում (բանկետ, ֆուրջեթ, մրցանակաբաշխություն, հարսանիք և այլն) փորձում է անպայմանորեն նկարվել նրանց հետ: Երբ պաշտոնյաները ձար չունեն մերժելու, նկարվում են, բայց հայացքն ուղղված է ոչ թե տեսախցիկին, այլ՝ դեպի անորոշություն: Նմանատիպ նկարների հաճախ ենք հանդիպում Facebook-ում: Նկարի տերն ուրախանում է, որ բարձրաստիճան պաշտոնյայի կամ քաղաքական գործչի հետ «անմահացել» է, որը կարող է իր շրջապատում բերել սիմվոլիկ կապիտալ: Անշուշտ, ֆիզիկապես նրանք կողք կողքի են, բայց երբ հաշվի ենք առնում ոչ խոսքային հաղորդակցության նշանները, ապա նրանք տարբեր հարթություններում են:

Սոցիալական «ներքև»-ի ստրկությունը և եվրոպական մոդելի պաշտոնյան երևում է «Ամենևին էլ զվարձալի չէ» պատմվածքի մեջ նկա-

րագրվող այն միջադեպում, երբ չինացիներից ոչ ոք չի ուզում խմբակային նկար ունենալ Անգլիայի քաղաքներից մեկի քաղաքապետի հետ, քանի որ վերջինս «սանիտարական աշխատող է եղել, աղբատար մեքենա է վարել», որը ո՛չ իշխանություն ունի և ո՛չ էլ փող: «Նա այնքան է օգտակար, - նկատում է պատումը վարողը, - որքան խուլ մարդու ականջները» (էջ 107-108): Պատմվածքի հաջորդ տողերում ավելանում է պատումը վարողի հեզանքը չին պատվիրակների նկատմամբ. «Երբ իրենք ցանկանում էին լուսանկարվել նրա հետ, ուզում էին, որ նրա բախտից իրենց վրա էլ կաթեր, բայց եթե հիմա լուսանկարվեն, այդ լուսանկարը հավանաբար իրենց վատ բախտ կբերի, և իրենք վերջում կդառնան տաքսու վարորդներ: Իրենք ավելի լավ է հեռանան այդտեղից: Երբ մենք շարքով դուրս եկանք քաղաքային դահլիճից, բազմության միջից թեթևության հառաչներ լսվեցին: Ահ, երբեք օտար երկրում պաշտոն չզբաղեցնեք. դա ամենևին էլ զվարձալի չէ» (էջ 108):

Պաշտոնյաներին ողջունելու ձևերը Լաո Ման նկարագրում է «Մի թեթև ձեռքով» պատմվածքում: Պատումը վարողի դասընկերը, որը դարձել է փոխքաղաքապետի քարտուղարը, մի անգամ «անհոգ» կերուխումի ժամանակ «մի զավեշտական բան է պատմում»: Երբ դառնում է «քաղաքի ղեկավարը...», նա պահպանեց ձեռքերը որովայնի ներքևում խաչելու սովորությունը, հատկապես հարցազրույցների և հետաքննությունների ժամանակ, մի բան, որ հեշտությամբ նկատվում էր հեռուստացույց դիտելիս: Փոքրիկ փոփոխությունն այն էր, որ նա առաջվա նման այդքան շատ ձեռք չէր սեղմում, այլ բարձրացնում էր այն օդում՝ ողջունելու համար: Քաղաքապետը չի կարող բոլորի ձեռքը սեղմել, այնպես որ, փոխարենը նա ժողովրդի հետ խոսելիս ձեռքը թափահարում է» (էջ 140): Պատումի ընթացքում հեղինակը դետալներ է ավելացնում քարտուղար Ջիանյի ձեռքի շարժումների մասին այն բանից հետո, երբ քաղաքապետը ավտովթարի է ենթարկվում և «կորցնում բազուկներից մեկը». «Երեկ ես, - նկատում է պատումը վարողը, - քաղաքապետին նորությունների ժամանակ կրկին հեռուստացույցով տեսա: Դե, այժմ նա քաղաքապետարանի կենտրոնական կոմիտեի քարտուղարն է: Լրագրողներին ի տես՝ նա ձեռքն ուժեղ թափահարեց, բայց այլևս չէր կարող ձեռքերը խաչել: Ես հասկացա, որ հիմա նա «մի թեթև ձեռք» էր, անշուշտ» (էջ 140):

Հումորային մոդուսի մեջ են քննադատվում կոռումպացված չին հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ: Օրինակ՝ «Վերապատրաստում» պատմվածքում կիսագրագետ Բիգ-չին Սունը

10 Տե՛ս Ալան Փիզ / Барбара Пиз. Новый язык телодвижений. Расширенная версия. М., 2006, с. 69.

վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում: Ամենից գրավիչը «Հարստության ցուցադրման էական ուսուցում» կուրսն էր, «որը մարդկանց սովորեցնում էր ցուցամոլություն և պոռոտախոսություն»: Բացի այդ՝ կուրսեր էին կազմակերպվում, օրինակ, «ինչպես քայլելիս փորը դուրս ցցել ու ձեռքերը մեջքին դնել» կամ «լավ բխկալ» (էջ 90):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Լաո Մայի պատվածքները շոշափում են կարևորագույն խնդիրներ, որոնք կարելի է տեսնել տարբեր մշակույթներում ու հասարակություններում: Կաշառակերությունը, կոռուպցիան, գումարները գրպանելու զանազան միջոցները (դարձագումար, օֆշոր), սոցիալական ստրկությունը և ուղղահայաց կառավարման մոդելը վերազգային երևույթներ են և քանի դեռ հասարակությունները աշալուրջ ու հետևողական չեն կենսաբանական օրենքներով շարժվող քաղաքական այրերի գործունեության նկատմամբ, նրանք շարունակելու են իրենց մեծամիտ պահել խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության մակարդակում: Իշխանական «վերև»-ը շարունակելու է մնալ իր ուղեղի «գոհը»՝ կատարելով ուղեղի հիմնական ցանկություն-հրամանները, այն է՝ իշխել, փող աշխատել, ուտել-խմել, ցեղաշարունակության բնազդը բավարարել և իզական սեռի լավագույն տեսակը վայելել և այլն:

**Բանալի բառեր.** – Չինաստան, աստիճանավորություն, բյուրոկրատիա, կոռուպցիա, դարձագումար, իշխանության ուղղահայաց, իշխանության քննադատություն, սոցիալական ստրկություն:

#### Резюме

Тигран Симян

Тема коррупции на примере цикла рассказов

Лао Ма "Особенная личность"

В статье анализируются рассказы Лао Ма - одного из основателей "жанра" "flash-fiction". Название "жанра" указывает на ультракороткие рассказы (300-1000 слов), на возможность прочесть за один присест (in-one-sitting). В тематическом паноптикуме рассказов Лао Ма затронуты такие темы, как вертикальное управление и менеджмент, коррупция, взяточничество, "откаты", социальное рабство и т.д. Интересен Лао Ма тем, что темы, к которым он обращается - общечеловеческие, транснациональные, рассказываются в основном с точки зрения Я-рассказчика (Ich-Erz?hlung). Подобная организация наррации придает текстам "документальность" и правдоподобность. Подчеркивая

"факт", автор пытается по возможности вывести читателя из мира вымысла, выдумки, фантазии. В основном рассказы представлены в модусе юмора и абсурдности ("Кашель", "Развал", "Поэт", "Философия").

Анализ материала показал, что взяточничество, коррупция, "откаты" будут продолжаться до тех пор, пока гражданское общество не будет в высшей степени бдительным и последовательным в контроле политической элиты среднего и высшего эшелона. Пока нет контроля "снизу", "верх" всегда будет бессознательно руководствоваться сугубо биологическими законами, будет "жертвой" диктата собственного мозга, т. е. будет выполнять "заказы" мозга: зарабатывание денег, еда / питье, инстинкт продолжения рода / передача собственного генома в следующее поколение, подчеркивание доминантности на невербальном уровне, а также секс и полигамность.

#### Summary

TIGRAN SIMYAN

The topic of corruption on the example of the story cycle of "One particular Person" by Lao Ma

The article analyzes ultra-short stories (300-1000 words) written by one of the founder of the "flash-fiction" genre Lao Ma. The name "genre" refers to ultra-short stories (300-1000 words), the ability to read in-one-sitting. The thematic repertory of Lao Ma stories includes topics such as the vertical control and management, corruption, bribery, "kickbacks", social slavery, etc. Lao Ma is interesting since the topics, which he touches upon, are universal, transnational, and they are narrated mainly from the perspective of the first person "I" (Ich-Erz?hlung). Such organization endows the narrative texts with the characteristics of a documentaries and plausibility. Stressing the "fact", the author tries to take the reader as much as possible out of the world of the imaginary, fiction and fantasy. The stories are mainly presented in the mode of humor and absurdity ("Cough", "Collapse", "The Poet", and "Philosophy").

Analysis of the material showed that bribery, corruption, "kickbacks" would continue until the civil society becomes extremely vigilant and consistent in the control of the middle and upper tier of the political elite. While there is no control "from below", "the top" will always be unconsciously guided by purely biological laws, being a "victim" of the dictates of its own brain, i.e. it will perform the "orders" of the brain: making money, food / drink, the instinct of procreation / transfer of the ownership genome to the next generation, emphasizing the dominance on the non-verbal level, as well as sex and polygamy.